Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

## «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 15.09.2015թ-ի թիվ 21 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, RL 1-001 կանոնների 8.3.1-րդ կետի և RL 1-017 կանոնների 5-րդ և 10-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 234.000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, RL 1-001 կանոնների 8.3.1-րդ և 8.3.4-րդ կետերի ու RL 1-017 կանոնների 8-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻԿՄ
ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության 22, տարածք 2
Հեռ. +37410 58 00 32, ֆաքս +37410 51 92 00
էլ-փոստ info@paap.am, www.paap.am